

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

«Կիբեռհանցագործությունների մասին»

կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն՝

ընդլայնված համագործակցության եւ

էլեկտրոնային ապացույցների հրապարակման մասին

Նախնական խմբագրությամբ/ Edition provisoire

«Կիբեռհանցագործությունների մասին»
կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն՝
ընդլայնված համագործակցության եւ
էլեկտրոնային ապացույցների հրապարակման մասին

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները եւ 2001 թվականի նոյեմբերի 23-ին Բուդապեշտում ստորագրման համար բացված՝ «Կիբեռահանցագործությունների մասին» կոնվենցիայի (ԵՊՇ թիվ 185, այսուհետ՝ Կոնվենցիա) մյուս Կողմ պետությունները, այն ստորագրող Կողմերը՝

հաշվի առնելով Կոնվենցիայի ընդգրկվածությունը եւ ազդեցությունն աշխարհի բոլոր տարածաշրջաններում,

վկայակոչելով, որ Կոնվենցիան արդեն լրացվել է 2003 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում ստորագրման համար բացված՝ «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական եւ քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրությամբ (ԵՊՇ թիվ 189) (այսուհետ՝ Առաջին արձանագրություն), որը գործում է այդ արձանագրության Կողմերի միջեւ,

հաշվի առնելով քրեական հարցերով համագործակցության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործող պայմանագրերը, ինչպես նաեւ Կոնվենցիայի Կողմերի միջեւ քրեական հարցերով համագործակցության վերաբերյալ մյուս համաձայնագրերը եւ պայմանավորվածությունները,

հաշվի առնելով նաեւ 2018 թվականի հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում ստորագրման համար բացված՝ «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան (ԵՊՇ թիվ 108)՝ փոփոխված վերջինիս փոփոխող արձանագրությամբ (ԵՊՇ թիվ 223), եւ որին ցանկացած Կողմ կարող է հրավիրվել միանալու,

ընդունելով տեղեկությունների եւ հաղորդակցության տեխնոլոգիաների, այդ թվում՝ համացանցային ծառայությունների կիրառության աճող տեմպերը եւ կիբեռահանցագործությունների աճող ծավալները, ինչը վտանգ է ներկայացնում ժողովրդավարության եւ օրենքի գերակայության համար, եւ որը շատ պետություններ համարում են սպառնալիք նաեւ մարդու իրավունքների համար,

ընդունելով նաև կիրճահանցագործությունների գոհերի թվի աճը եւ այդ գոհերի համար արդարադատություն ապահովելու կարելոթությունը,

վկայակոչելով, որ կառավարություններն ունեն հասարակությունը եւ անհատներին հանցագործություններից ոչ միայն ցանցից դուրս, այլ նաև առցանց պաշտպանելու պատասխանատվություն, այդ թվում՝ քրեական գործով արդյունավետ քննությունների եւ քրեական հետապնդումների միջոցով,

տեղյակ լինելով, որ ցանկացած քրեական իրավախախտման ապացույց ավելի հաճախ պահվում է էլեկտրոնային ձեւաչափով՝ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների, տարբեր պետությունների իրավասու մարմինների կամ անհայտ իրավասու մարմինների համակարգչային համակարգերում, եւ համոզված լինելով, որ քրեական արդարադատության արդյունավետ արձագանքի եւ օրենքի գերակայության ապահովումը հնարավոր դարձնելու նպատակով անհրաժեշտ են այդ ապացույցներն օրինական ձեռքբերելու համար լրացուցիչ միջոցներ,

ճանաչելով պետությունների եւ մասնավոր հատվածի միջեւ ավելի խորը եւ արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը, եւ որ այս համատեքստում ծառայություն մատուցող ընկերությունների եւ այլ սուբյեկտների համար անհրաժեշտ է ապահովել հստակության եւ իրավական որոշակիության ավելի բարձր մակարդակ այն հանգամանքների մասով, որոնց դեպքում նրանք կարող են արձագանքել այլ Կողմերի քրեական արդարադատություն իրականացնող մարմինների՝ էլեկտրոնային տվյալների հրապարակման վերաբերյալ ուղղակի հարցումներին,

հետեւաբար, նպատակ ունենալով իրավասու մարմինների միջեւ ավելի արդյունավետ փոխադարձ օգնությանը եւ համագործակցության այլ ձեւերի առնչվող լրացուցիչ գործիքների միջոցով առավել ընդլայնել համագործակցությունը կիրճահանցագործության եւ կոնկրետ քրեական գործով քննություններ կամ վարույթներ իրականացնելու նպատակով քրեական իրավախախտման ապացույցներն էլեկտրոնային ձեւաչափով հավաքելու ոլորտում, արտակարգ իրավիճակներում համագործակցությունը եւ իրավասու մարմինների ու ծառայություն մատուցողների եւ այլ սուբյեկտների միջեւ վերաբերելի

տեղեկությունների տիրապետման կամ վերահսկողության մասով ուղղակի համագործակցությունը,

համոզված լինելով, որ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության արդյունավետ պայմանները եւ երաշխիքները նպաստում են քրեական արդարադատության նպատակով արդյունավետ անդրսահմանային համագործակցությանը, այդ թվում՝ պետական եւ մասնավոր հատվածների միջեւ.

ճանաչելով, որ քրեական գործով քննությունների համար էլեկտրոնային ապացույցների հավաքումը հաճախ կապված է անձնական տվյալների հետ, եւ ճանաչելով շատ Կողմերի կողմից իրենց սահմանադրական եւ միջազգային պարտավորությունների ապահովման նպատակով գաղտնիության եւ անձնական տվյալների պաշտպանության պահանջը, եւ

ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ անհրաժեշտ է ապահովել, որ կիրառական համագործության եւ էլեկտրոնային ձեռով ապացույցների հավաքման համար նախատեսված արդյունավետ քրեական արդարադատության միջոցներն իրականացվեն այնպիսի պայմանների եւ երաշխիքների համաձայն, որոնք նախատեսում են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պատշաճ պաշտպանություն, ներառյալ՝ այն իրավունքները, որոնք բխում են պետությունների կողմից ստանձնած՝ մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող այնպիսի կիրառելի միջազգային փաստաթղթերից, ինչպիսիք են օրինակ՝ Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան (ԵՊՇ թիվ 5), 1966 թվականի՝ Միավորված ազգերի՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, 1981 թվականի՝ Մարդու եւ ժողովուրդների իրավունքների մասին աֆրիկյան խարտիան, 1969 թվականի՝ Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիան եւ մարդու իրավունքների այլ միջազգային փաստաթղթեր,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Նպատակը

Սույն արձանագրության նպատակն է լրացնել՝

- ա. Կոնվենցիան, որը գործում է սույն արձանագրության Կողմերի միջև, եւ
- բ. Առաջին արձանագրությունը, որը գործում է սույն արձանագրության այն Կողմերի միջև, որոնք նաեւ Առաջին արձանագրության Կողմեր են:

Հոդված 2. Կիրառման ոլորտը

1. Բացառությամբ այս պարբերության մեջ նշված այլ դեպքերի՝ սույն արձանագրության մեջ նկարագրված միջոցները կիրառվում են՝

ա. Կոնվենցիայի այն անդամների միջև, որոնք սույն արձանագրության Կողմեր են՝ համակարգչային համակարգերին եւ տվյալներին առնչվող քրեական իրավախախտումների կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների եւ քրեական իրավախախտման վերաբերյալ էլեկտրոնային ձեւով ապացույցների հավաքման մասով. եւ

բ. Առաջին արձանագրության այն Կողմերի միջև, որոնք սույն արձանագրության Կողմեր են՝ Առաջին արձանագրության համաձայն սահմանված քրեական իրավախախտումներին վերաբերող կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների մասով:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն արձանագրության մեջ սահմանված պարտավորությունները կատարելու համար:

Հոդված 3. Սահմանումները

1. Կոնվենցիայի 1-ին հոդվածում եւ 18-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ տրված սահմանումները կիրառվում են սույն արձանագրության նկատմամբ:

2. Սույն արձանագրության նպատակով կիրառելի են հետեւյալ լրացուցիչ սահմանումները.

ա. «կենտրոնական մարմին» նշանակում է տվյալ Կողմերի միջեւ գործող միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագրի կամ պայմանավորվածության շրջանակում նշանակված մարմին կամ մարմիններ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2.ա պարբերության համաձայն Կողմի կողմից նշանակված մարմին կամ մարմիններ.

բ. «իրավասու մարմին» նշանակում է դատական, վարչական կամ այլ իրավապահ մարմին, որը ներպետական իրավունքով լիազորված է կարգադրել, լիազորել կամ նախաձեռնել կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների մասով ապացույցների հավաքման կամ ներկայացման նպատակով սույն արձանագրությամբ նախատեսված միջոցների իրականացումը.

գ. «արտակարգ իրավիճակ» նշանակում է իրավիճակ, երբ առկա է ֆիզիկական անձի կյանքին կամ անվտանգությանը սպառնացող էական եւ ուղղակի ռիսկ.

դ. «անձնական տվյալներ» նշանակում է նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձին վերաբերող տեղեկություն.

ե. «փոխանցող Կողմ» նշանակում է հարցմանն ի պատասխան կամ որպես քրեական գործով համատեղ քննության խմբի մասնակից՝ տվյալներ փոխանցող Կողմ, իսկ II գլխի 2-րդ բաժնի նպատակներով՝ Կողմ, որի տարածքում գտնվում է տվյալների փոխանցման ծառայություն մատուցողը կամ տիրույթային անվանման գրանցման ծառայություններ տրամադրող սուբյեկտը:

Հոդված 4. Լեզուն

1. Կողմին ներկայացվող հարցումները, կարգադրությունները եւ կից

ներկայացվող տեղեկությունները պետք է լինեն հարցվող Կողմի կամ 7-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն ծանուցվող Կողմի համար ընդունելի լեզվով, կամ դրանց կից պետք է ներկայացվեն այդ լեզվով թարգմանություններ:

2. 7-րդ հոդվածի համաձայն կարգադրությունները եւ 6-րդ հոդվածի համաձայն հարցումները եւ կից ներկայացվող տեղեկությունները պետք է՝

ա. ներկայացվեն այն մյուս Կողմի լեզվով, որտեղ ծառայություն մատուցողը կամ սուբյեկտն ընդունում է համադրելի ներքին գործընթաց,

բ. ներկայացվեն ծառայություն մատուցողի կամ սուբյեկտի համար ընդունելի այլ լեզվով, կամ

գ. կից ներկայացվեն 2.ա կամ 2.բ պարբերությամբ նախատեսված լեզուներից մեկով թարգմանություն:

Գլուխ II. Ընդլայնված համագործակցության միջոցները

Բաժին 1. Գլուխ II-ի համար կիրառելի ընդհանուր սկզբունքները

Հոդված 5. Գլուխ II-ի համար կիրառելի ընդհանուր սկզբունքները

1. Կողմերը հնարավորինս համագործակցում են սույն գլխի դրույթներին համապատասխան:

2. Սույն գլխի 2-րդ բաժինը բաղկացած է 6-րդ եւ 7-րդ հոդվածներից: Այն սահմանում է այլ Կողմի տարածքում ծառայություն մատուցողների եւ սուբյեկտների հետ ուղղակի համագործակցության ընդլայնման ընթացակարգերը: 2-րդ բաժինը կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե արդյոք շահագրգիռ Կողմերի միջեւ գործում է միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող

օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն:

3. Սույն գլխի 3-րդ բաժինը բաղկացած է 8-րդ եւ 9-րդ հոդվածներից: Այն սահմանում է պահպանված համակարգչային տվյալների հրապարակման մասով մարմինների միջեւ միջազգային համագործակցության ընդլայնման ընթացակարգերը: 3-րդ բաժինը կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե արդյոք հարցվող եւ հարցում ներկայացնող Կողմերի միջեւ գործում է միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն:

4. Սույն գլխի 4-րդ բաժինը բաղկացած է 10-րդ հոդվածից: Այն սահմանում է արտակարգ իրավիճակներում փոխադարձ օգնության տրամադրման ընթացակարգերը: 4-րդ բաժինը կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե արդյոք հարցվող եւ հարցում ներկայացնող Կողմերի միջեւ գործում է միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն:

5. Սույն գլխի 5-րդ բաժինը բաղկացած է 11-րդ եւ 12-րդ հոդվածներից: 5-րդ բաժինը կիրառվում է այն դեպքում, երբ հարցվող եւ հարցում ներկայացնող Կողմերի միջեւ չի գործում միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն: 5-րդ բաժնի դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ գործում է նման պայմանագիր կամ պայմանավորվածություն՝ բացառությամբ 12-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Այնուամենայնիվ, շահագրգիռ Կողմերը կարող են դրա փոխարեն փոխադարձաբար որոշել կիրառել 5-րդ բաժնի դրույթները, եթե պայմանագրով կամ պայմանավորվածությամբ դա չի արգելվում:

6. Այն դեպքում, երբ, սույն արձանագրության դրույթներին համապատասխան, հարցվող Կողմին թույլատրվում է համագործակցության համար սահմանել երկակի քրեականության առկայության պայման, այդ պայմանը

համարվում է կատարված, եթե այն հանցագործության հիմքում, որի համար հայցվում է փոխադարձ օգնություն, ընկած է այնպիսի վարքագիծ, որը վերջինիս օրենսդրությամբ սահմանվում է որպես քրեական իրավախախտում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք վերջինիս օրենսդրության համաձայն այդ հանցագործությունը դասակարգվում է նույն կատեգորիայի ներքո, թե հանցագործությունը սահմանվում է այն նույն եզրութաբանության համաձայն, որը կիրառվում է պահանջը ներկայացնող Կողմի կողմից:

7. Սույն գլխում նախատեսված դրույթները չեն սահմանափակում այլ կիրառելի համաձայնագրերով, պայմանավորվածություններով, գործելակերպերով կամ ներպետական իրավունքով նախատեսված համագործակցությունը Կողմերի միջև կամ Կողմերի եւ ծառայություն մատուցողների ու այլ սուբյեկտների միջև:

Բաժին 2. Այլ Կողմերի ծառայություն մատուցողների եւ սուբյեկտների միջև ուղղակի համագործակցության ընդլայնման ընթացակարգերը

Հոդված 6. Տիրույթի անվանման գրանցման մասին տեղեկությունների վերաբերյալ հարցում

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կլիազորեն վերջինիս իրավասու մարմիններին կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների նպատակով այլ Կողմի տարածքում տիրույթի անվանման գրանցման ծառայություն տրամադրող սուբյեկտին ներկայացնել հարցում՝ այդ սուբյեկտի տիրապետման կամ հսկողության ներքո գտնվող տեղեկությունների վերաբերյալ՝ տիրույթի անվանման գրանցումն իրականացնող սուբյեկտի նույնականացման կամ դրա հետ կապ հաստատելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք թույլ կտան վերջինիս տարածքում գործող սուբյեկտին ներպետական իրավունքով նախատեսված ողջամիտ պայմանների բավարարման

դեպքում ի պատասխան 1-ին պարբերության համաձայն ներկայացվող հարցմանը հրապարակել այդ տեղեկությունները:

3. 1-ին պարբերության համաձայն ներկայացվող հարցումը պետք է ներառի հետևյալը.

ա. հարցումը ներկայացնելու ամսաթիվը եւ հարցումը ներկայացնող իրավասու մարմնի նույնականացման եւ կոնտակտային տվյալները.

բ. այն տիրույթի անվանումը, որի վերաբերյալ կատարվում է հարցումը, եւ հարցվող տեղեկությունների մանրամասն ցանկը, այդ թվում՝ կոնկրետ տվյալների տարրերը.

գ. հայտարարություն այն մասին, որ հարցումը ներկայացվել է սույն արձանագրության համաձայն, որ այդ տեղեկության անհրաժեշտությունը ծագում է այն պատճառով, որ այն վերաբերում է կոնկրետ քրեական գործով քննությանը կամ վարույթին, եւ որ այդ տեղեկությունն օգտագործվելու է միայն կոնկրետ քրեական գործով քննության կամ վարույթի համար.

դ. տեղեկությունը հրապարակելու ժամկետը եւ կարգը եւ այլ հատուկ ընթացակարգային ցուցումներ:

4. Կողմը կարող է 1-ին պարբերության մեջ նշված հարցումն ուղարկել էլեկտրոնային եղանակով, եթե դա ընդունելի է տվյալ սուբյեկտի համար: Կարող է պահանջվել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակ:

5. 1-ին պարբերության մեջ նշված սուբյեկտի կողմից համագործակցություն չցուցաբերելու դեպքում հարցում ներկայացնող Կողմը սուբյեկտից կարող է պահանջել հիմնավորել անհրաժեշտ տեղեկությունները չհրապարակելու պատճառները: Տեղեկությունը ձեռք բերելու համար հասանելի միջոցները որոշելու նպատակով հարցում ներկայացնող Կողմը կարող է պահանջել անցկացնել խորհրդակցություն այն Կողմի հետ, որտեղ գտնվում է տվյալ սուբյեկտը:

6. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ

վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կամ որեւէ այլ դեպքում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացնում է տեղեկություններ 5-րդ պարբերության համաձայն խորհրդակցության նպատակով նշանակված մարմնի վերաբերյալ:

7. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կազմում է 6-րդ պարբերության համաձայն Կողմերի կողմից նշանակված մարմինների ռեզիստր եւ թարմացնում այն: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր կողմից ռեզիստրի համար տրամադրված տվյալները ցանկացած ժամանակ ճիշտ լինեն:

Հոդված 7. Բաժանորդների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք ծառայություն մատուցողի տիրապետման կամ վերահսկողության ներքո գտնվող՝ բաժանորդների վերաբերյալ նշված, պահպանված տեղեկությունների հրապարակման թույլտվություն ստանալու նպատակով կլիազորեն իր իրավասու մարմիններին արձակել մյուս Կողմի տարածքում գործող ծառայություն մատուցողին անմիջականորեն ներկայացվող կարգադրություն, եթե բաժանորդի վերաբերյալ տեղեկություններն անհրաժեշտ են կարգադրությունն արձակող Կողմի կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների համար:

2.ա. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք իր տարածքում գործող ծառայություն մատուցողին անհրաժեշտ են 1-ին պարբերության համաձայն կարգադրությանն ի պատասխան՝ բաժանորդի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելու համար:

բ. Սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս, իր տարածքում գործող ծառայություն մատուցողների նկատմամբ արձակված կարգադրությունների մասով, Կողմը կարող է անել հետեւյալ հայտարարությունը՝ «7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կարգադրությունը պետք է

արձակվի դատախազի կամ այլ դատական մարմնի կողմից կամ նրա հսկողության ներքո, կամ որեւէ այլ կերպ արձակվի անկախ հսկողության ներքո»:

3. 1-ին պարբերության համաձայն ներկայացված կարգադրության մեջ նշվում է հետևյալը.

ա. արձակող մարմինը եւ արձակման ամսաթիվը.

բ. հայտարարություն այն մասին, որ կարգադրությունն արձակվել է սույն արձանագրության համաձայն.

գ. մատուցման ենթակա ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը եւ հասցեն.

դ. քրեական գործով քննության կամ վարույթի առարկա հանդիսացող հանցագործությունը (հանցագործությունները).

ե. բաժանորդի վերաբերյալ հատուկ տեղեկություններ պահանջող մարմինը, եթե այն տարբերվում է կարգադրությունն արձակող մարմնից. եւ

զ. բաժանորդի վերաբերյալ պահանջվող հատուկ տեղեկությունների մանրամասն նկարագրությունը:

4. 1-ին պարբերության համաձայն արձակված կարգադրությանը կից ներկայացվում են հետևյալ լրացուցիչ տեղեկությունները.

ա. ներպետական իրավական հիմքերը, որոնք տվյալ մարմնին լիազորում են արձակել այդ կարգադրությունը.

բ. հղում իրավական դրույթներին կամ կիրառելի պատժամիջոցներին այն հանցագործությունների մասով, որոնց նկատմամբ իրականացվում է քննություն կամ քրեական հետապնդում.

գ. այն մարմնի կոնտակտային տվյալները, որին ծառայություն մատուցողը պետք է վերադարձնի բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները, որից նա կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, կամ որին նա պետք է պատասխանի այլ դեպքերում.

դ. բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները վերադարձնելու ժամկետը

եւ կարգը.

ե. թե արդյոք արդեն պահանջվել է պահպանել տվյալները, այդ թվում՝ պահպանման ամսաթիվը եւ ցանկացած կիրառելի հղումային համար.

զ. ցանկացած հատուկ ընթացակարգային ցուցում.

է. անհրաժեշտության դեպքում՝ հայտարարություն այն մասին, որ 5-րդ պարբերության համաձայն միաժամանակ ուղարկվել է ծանուցում.

ը. ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է օգնել ստանալու բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման թույլտվություն:

5.ա. Սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս եւ ցանկացած այլ ժամանակ Կողմը կարող է ծանուցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, որ երբ իր տարածքում գործող ծառայություն մատուցողի նկատմամբ 1-ին պարբերության համաձայն արձակվում է կարգադրություն, բոլոր դեպքերում կամ նախանշված հանգամանքներում Կողմը պահանջում է կարգադրության մասին միաժամանակ ուղարկվող ծանուցում, քրեական գործով քննությանը կամ վարույթին վերաբերող լրացուցիչ տեղեկությունների եւ փաստերի ամփոփ ներկայացում:

բ. Անկախ այն հանգամանքից, թե Կողմը պահանջում է 5-րդ պարբերության համաձայն ներկայացնել ծանուցում, թե ոչ, այն Կարող է պահանջել, որ նախքան տեղեկությունները հրապարակելը ծառայություն մատուցողը խորհրդակցի Կողմի համապատասխան մարմինների հետ՝ նախանշված հանգամանքների շուրջ:

գ. 5.ա պարբերության համաձայն ծանուցված մարմինները կամ այն մարմինները, որոնց հետ 5.բ պարբերության համաձայն անցկացվել են խորհրդակցություններ, կարող են ծառայություն մատուցողին առանց անհարկի ուշացման ցուցում տալ բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու վերաբերյալ, եթե՝

i. հրապարակումը կարող է վնասել այդ Կողմում իրականացվող քրեական

գործով քննություններին կամ վարույթներին. կամ

ii. կիրառվում են Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ եւ 27-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված՝ մերժման պայմանները եւ հիմքերն այն դեպքում, երբ բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները պահանջվում են փոխադարձ օգնության շրջանակներում:

դ. 5.ա պարբերության համաձայն ծանուցված մարմինները կամ այն մարմինները, որոնց հետ խորհրդակցել են 5.բ պարբերության համաձայն՝

i. 5.գ պարբերության կիրառման նպատակներով 4.գ պարբերության մեջ նշված մարմիններից կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություններ եւ առանց այդ մարմինների համաձայնության չպետք է դրանք հրապարակեն ծառայություն մատուցողներին. եւ

ii. 4.գ պարբերության մեջ նշված մարմիններին անհապաղ տեղեկացնում են այն մասին, որ ծառայություն մատուցողին բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու ցուցում է տրվել, եւ ներկայացնում են դրա պատճառները:

ե. 5.ա պարբերության համաձայն ծանուցումն ստանալու եւ 5.բ, 5.գ եւ 5.դ պարբերություններում նշված գործողություններն իրականացնելու համար Կողմը նշանակում է մեկ մարմին: 5.ա պարբերության համաձայն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին առաջին անգամ ծանուցելիս Կողմը Գլխավոր քարտուղարին տրամադրում է այդ մարմնի կոնտակտային տվյալները:

զ. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ստեղծում է 5.ե պարբերության համաձայն Կողմերի կողմից նշանակված մարմինների եւ այն մասին ռեզիստր, թե արդյո՞ք դրանք պահանջում են 5.ա պարբերության համաձայն ծանուցում, եւ եթե այո, ապա ինչ հանգամանքներում, եւ թարմացնում է այդ ռեզիստրը: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ռեզիստրի համար իր կողմից տրամադրված տվյալները ցանկացած ժամանակ ճիշտ լինեն:

6. Կողմը 1-ին պարբերության համաձայն կարգադրությունը եւ 4-րդ պարբերության համաձայն լրացուցիչ տեղեկությունները կարող է ներկայացնել էլեկտրոնային եղանակով, եթե դա ընդունելի է ծառայություն մատուցողի համար: Կողմը 5-րդ պարբերության համաձայն ծանուցումը եւ լրացուցիչ տեղեկությունները կարող է տրամադրել էլեկտրոնային եղանակով: Կարող է պահանջվել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակ:

7. Եթե ծառայություն մատուցողը 4.գ պարբերության մեջ նշված մարմնին տեղեկացնում է, որ չի հրապարակելու բաժանորդի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները, կամ 1-ին պարբերության համաձայն ներկայացված կարգադրությանն ի պատասխան՝ կարգադրությունն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կամ 4.դ պարբերությամբ սահմանված ժամկետում՝ կախված այն հանգամանքից, թե որ ժամկետն է ավելի երկար, չի հրապարակում բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները, ապա կարգադրությունն արձակող Կողմի իրավասու մարմինը կարող է պահանջել կարգադրությունը կատարել միայն 8-րդ հոդվածի միջոցով կամ փոխադարձ օգնության այլ եղանակներով: Կողմերը կարող են պահանջել, որ ծառայություն մատուցողը ներկայացնի կարգադրությամբ պահանջվող՝ բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները հրապարակելու մերժման պատճառները:

8. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ կարգադրությունն արձակող Կողմը 8-րդ հոդվածի համաձայն բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները պահանջելուց առաջ, պետք է դրանք պահանջի ծառայություն մատուցողից, եթե կարգադրությունն արձակող Կողմը չի ներկայացնում դա չանելու ողջամիտ բացատրություն:

9. Սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Կողմը կարող է՝

ա. իրավունք վերապահել չկիրառելու այս հոդվածը. կամ

բ. եթե սույն հոդվածի համաձայն մուտքի համարների կոնկրետ տիպերի

հրապարակումը չի համապատասխանում ներպետական իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին, ապա իրավունք վերապահել չկիրառելու այս հոդվածն այդ համարների նկատմամբ:

Բաժին 3. Պահպանված համակարգչային տվյալների հրապարակման մասով մարմինների միջև միջազգային համագործակցության ընդլայնման ընթացակարգերը

Հոդված 8. Մյուս Կողմի՝ բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների եւ տրաֆիկի տվյալների՝ արագացված ընթացակարգով տրամադրման կարգադրությունների կատարումը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կլիազորեն իր իրավասու մարմիններին արձակել կարգադրություն, որը ներկայացվելու է որպես մյուս Կողմին ուղղված այն հարցման մաս, որի նպատակն է հարցվող Կողմի տարածքում գործող ծառայություն մատուցողին պարտավորեցնել տրամադրել իր տիրապետման եւ վերահսկողության ներքո գտնվող նշված եւ պահպանված՝

ա. բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները, եւ

բ. տրաֆիկի տվյալները,

որոնք անհրաժեշտ են Կողմի կոնկրետ քրեական գործով քննությունների կամ վարույթների համար:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն հարցում ներկայացնող Կողմի կողմից 1-ին պարբերության մեջ նշված կարգադրությունը կատարելու համար:

3. Հարցում ներկայացնող Կողմն իր հարցմանը կից ներկայացնում է 1-ին պարբերության մեջ նշված կարգադրությունը, հիմնավորող տեղեկությունները եւ

հարցվող Կողմին ուղղված այլ հատուկ ընթացակարգային ցուցումներ:

- ա. Կարգադրության մեջ նշվում է հետեւյալը.
- i. կարգադրությունն արձակող մարմինը եւ կարգադրությունն արձակելու ամսաթիվը.
- ii. հայտարարություն այն մասին, որ կարգադրությունը ներկայացվել է սույն արձանագրության համաձայն.
- iii. այն ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը եւ հասցեն, որին (որոնց) պետք է տրվի կարգադրությունը.
- iv. քրեական գործով քննության կամ վարույթի առարկա հանդիսացող հանցագործությունը (հանցագործությունները).
- v. տեղեկությունները կամ տվյալները պահանջող մարմինը, եթե այն տարբեր է կարգադրությունն արձակող մարմնից. եւ
- vi. պահանջվող հատուկ տեղեկությունների կամ տվյալների մանրամասն նկարագրությունը:
- բ. Հիմնավորող տեղեկությունները, որոնք տրամադրվում են հարցում ներկայացնող Կողմին՝ կարգադրության կատարման հարցում աջակցելու նպատակով, եւ որոնք առանց հարցում ներկայացնող Կողմի համաձայնության չեն հրապարակվում ծառայություն մատուցողին, ներառում են հետեւյալը.
- i. ներպետական իրավական հիմքերը, որոնք տվյալ մարմնին լիազորում են արձակել կարգադրությունը.
- ii. իրավական դրույթները եւ կիրառելի պատժամիջոցներն այն հանցագործության (հանցագործությունների) մասով, որոնց առնչությամբ իրականացվում է քննություն կամ քրեական հետապնդում.
- iii. պատճառը, թե ինչու է հարցում ներկայացնող Կողմը կարծում, որ այդ տվյալները գտնվում են այդ ծառայություն մատուցողի տիրապետման կամ վերահսկողության ներքո.

iv. քրեական գործով քննությանը կամ վարույթին առնչվող փաստերի ամփոփ շարադրանքը.

v. տեղեկության կամ տվյալների առնչությունը քրեական գործով քննությանը կամ վարույթին.

vi. այն մարմնի կամ մարմինների կոնտակտային տվյալները, որոնք կարող են տրամադրել լրացուցիչ տեղեկություններ.

vii. արդյոք արդեն պահանջվել է պահպանել տեղեկությունները կամ տվյալները, այդ թվում՝ պահպանման ամսաթիվը եւ որեւէ կիրառելի հղումային համար.եւ

viii. արդյոք այլ միջոցներով արդեն պահանջվել է այդ տեղեկությունը կամ տվյալները, եւ եթե այո, ապա ինչ կարգով:

գ. Հարցում ներկայացնող Կողմը կարող է պահանջել, որ հարցվող Կողմը հետեւի հատուկ ընթացակարգային ցուցումների:

4. Մույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս եւ ցանկացած այլ ժամանակ Կողմը կարող է հայտարարել, որ 1-ին պարբերության մեջ նշված կարգադրության կատարման համար պահանջվում են լրացուցիչ հիմնավորող տեղեկություններ:

5. Հարցվող Կողմը հարցումներն ընդունում է էլեկտրոնային եղանակով: Նախքան հարցումն ընդունելը կարող է պահանջվել ապահովել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակներ:

6.ա. Հարցվող Կողմը 3-րդ եւ 4-րդ պարբերությունների մեջ նշված բոլոր տեղեկություններն ստանալու օրվանից ձեռնարկում է ողջամիտ միջոցներ 45 օրվա ընթացքում, եթե ոչ ավելի շուտ՝ ծառայությունը մատուցողին համապատասխան ծառայությունը մատուցելու համար, եւ կարգադրում է վերադարձնել պահանջվող տեղեկությունները կամ տվյալները ոչ ուշ, քան՝

i. քսան օրվա ընթացքում՝ բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների դեպքում. եւ

ii. քառասունհինգ օրվա ընթացքում՝ տրաֆիկի տվյալների դեպքում:

բ. Հարցվող Կողմն առանց անհարկի ուշացման ապահովում է տրամադրվող տեղեկությունների կամ տվյալների փոխանցումը հարցում ներկայացնող Կողմին:

7. Եթե հարցվող Կողմը պահանջված կարգով չի կարող կատարել 3.գ պարբերության մեջ նշված ցուցումները, ապա այն անհապաղ այդ մասին տեղեկացնում է հարցում ներկայացնող Կողմին եւ անհրաժեշտության դեպքում սահմանում բոլոր այն պայմանները, որոնց ապահովման դեպքում հնարավոր կլինի կատարել դրանք, որից հետո հարցում ներկայացնող Կողմը որոշում է կայացնում այն մասին, թե արդյոք, այնուամենայնիվ, անհրաժեշտ է կատարել հարցումը, թե ոչ:

8. Հարցվող Կողմը Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ կամ 27-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված հիմքերով կարող է հրաժարվել կատարել հարցումը կամ կարող է սահմանել հարցում կատարելը թույլ տալու համար անհրաժեշտ պայմանները: Հարցվող Կողմը Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 5-րդ պարբերության մեջ նշված պատճառներով կարող է հետաձգել հարցման կատարումը: Հարցվող Կողմը հնարավորինս շուտ հարցում ներկայացնող Կողմին ծանուցում է մերժման, պայմանների կամ հետաձգման մասին: Հարցվող Կողմը հարցում ներկայացնող Կողմին ծանուցում է նաեւ այն հանգամանքների մասին, որոնք կարող են զգալիորեն հետաձգել հարցման կատարումը: Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2.բ պարբերությունը կիրառելի է այս հոդվածի նկատմամբ:

9.ա. Եթե հարցում ներկայացնող Կողմը չի կարող կատարել հարցվող Կողմի կողմից 8-րդ պարբերությամբ սահմանված պայմանները, ապա այն պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնի հարցվող Կողմին: Հարցվող Կողմն այնուհետեւ որոշում է, թե արդյոք տեղեկությունները կամ նյութերը պետք է, այնուամենայնիվ, տրամադրվեն, թե ոչ:

բ. Եթե հարցում ներկայացնող Կողմն ընդունում է պայմանը, ապա պետք է պարտադիր կատարի այն: Այդ պայմանին համապատասխան տեղեկություն կամ նյութ տրամադրող հարցվող Կողմը կարող է հարցում ներկայացնող Կողմից պահանջել պարզաբանել նման տեղեկության կամ նյութի օգտագործումն այդ պայմանի կատարման մասով:

10. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացնում եւ թարմացնում է այն մարմինների կոնտակտային տվյալները, որոնք նշանակվել են՝

ա. սույն հոդվածի համաձայն կարգադրություն ներկայացնելու համար. եւ

բ. սույն հոդվածի համաձայն կարգադրություն ստանալու համար:

11. Կողմը կարող է սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս հայտարարել, որ պահանջում է, որ մյուս Կողմերի կողմից սույն հոդվածի համաձայն կատարվող հարցումներն իրեն ներկայացվեն հարցում ներկայացնող Կողմի կենտրոնական մարմնի կողմից կամ շահագրգիռ Կողմերի միջեւ փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ մարմնի կողմից:

12. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կազմում է 10-րդ պարբերության համաձայն Կողմերի կողմից նշանակված մարմինների ռեզիստր եւ թարմացնում այն: Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ռեզիստրի համար իր կողմից տրամադրված տվյալները ցանկացած ժամանակ ճիշտ լինեն:

13. Կողմը սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է իրեն իրավունք վերապահել այս հոդվածը չկիրառելու՝ տրաֆիկի տվյալների նկատմամբ:

Հոդված 9. Պահպանված համակարգչային տվյալների՝ արագացված

ընթացակարգով հրապարակումն արտակարգ իրավիճակներում

1.ա. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք արտակարգ իրավիճակներում կարող են անհրաժեշտ լինել շաբաթը յոթ օր քսանչորս ժամ հասանելի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված համակարգող կենտրոնին (համակարգող կենտրոն)՝ այն մյուս Կողմի համակարգող կենտրոնից հարցում ստանալու եւ դրան հարցում ուղարկելու համար, որն այդ Կողմի տարածքում գործող ծառայություն մատուցողին ներկայացնում է այդ ծառայություն մատուցողի տիրապետման եւ վերահսկողության ներքո գտնվող՝ նշված, պահպանված համակարգչային տվյալներն արագացված ընթացակարգով հրապարակելու հարցում օգնության պահանջ՝ առանց փոխադարձ օգնության հարցում ներկայացնելու:

բ. Կողմը սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ այն չի կատարելու 1.ա պարբերությամբ նախատեսված՝ միայն բաժանորդի վերաբերյալ տեղեկությունները հրապարակելու պահանջի մասին հարցումները:

2. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք 1-ին պարբերության համաձայն թույլ կտան՝

ա. իր մարմիններին՝ 1-ին պարբերության համաձայն հարցումը ներկայացնելուց հետո իր տարածքում գործող ծառայություն մատուցողից պահանջել տվյալներ.

բ. իր տարածքում գործող ծառայություն մատուցողին՝ 2.ա պարբերության համաձայն ներկայացված հարցմանն ի պատասխան՝ հարցվող տվյալները հրապարակել իր մարմիններին.

գ. իր մարմիններին՝ տրամադրել պահանջվող տվյալները հարցումը ներկայացնող մարմիններին:

3. 1-ին պարբերության համաձայն ներկայացվող հարցումը պետք է ներառի հետևյալը.

ա. տվյալները պահանջող իրավասու մարմինը եւ հարցումը ներկայացնելու ամսաթիվը.

բ. հայտարարություն այն մասին, որ հարցումը ներկայացվել է սույն արձանագրության համաձայն.

գ. ծառայություն մատուցողի անվանումը եւ հասցեն, որի տիրապետման եւ վերահսկողության ներքո գտնվում են պահանջվող տվյալները.

դ. քրեական գործով քննության կամ վարույթի առարկա հանդիսացող հանցագործությունը (հանցագործությունները) եւ հղում դրանց մասով իրավական դրույթներին եւ կիրառելի պատժամիջոցներին.

ե. արտակարգ իրավիճակի առկայությունը հաստատող բավարար փաստեր, եւ թե ինչ առնչություն ունեն պահանջվող տվյալները դրա հետ.

զ. պահանջվող տվյալների մանրամասն նկարագրությունը.

է. ցանկացած հատուկ ընթացակարգային ցուցում. եւ

ը. ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է օգնել ստանալու պահանջվող տվյալների հրապարակման թույլտվություն:

4. Հարցվող Կողմը հարցումն ընդունում է էլեկտրոնային եղանակով: Կողմը կարող է նաեւ ընդունել բանավոր փոխանցված հարցում կամ կարող է պահանջել հաստատում էլեկտրոնային եղանակով: Նախքան հարցումն ընդունելը կարող է պահանջվել ապահովել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակներ:

5. Կողմը սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ հարցում ներկայացնող Կողմից պահանջում է, որ հարցումը կատարելուց հետո հարցումը եւ դրանք հիմնավորելու համար կից ներկայացվող

բոլոր լրացուցիչ տեղեկությունները ներկայացնել հարցվող Կողմի կողմից սահմանված ձևաչափով եւ փոխադարձ օգնություն ներառող ուղիներով:

6. Հարցվող Կողմը հարցում ներկայացրած Կողմին արագացված ընթացակարգով տեղեկացնում է 1-ին պարբերության մեջ նշված հարցման վերաբերյալ իր որոշման մասին եւ անհրաժեշտության դեպքում նշում է տվյալները տրամադրելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները եւ համագործակցության բոլոր մյուս հասանելի ձևերը:

7.ա. Եթե հարցում ներկայացնող Կողմը չի կարող բավարարել 6-րդ պարբերության համաձայն հարցվող Կողմի կողմից սահմանված պայմանները, ապա այն անհապաղ այդ մասին տեղեկացնում է հարցվող Կողմին: Այնուհետեւ հարցվող Կողմը որոշում է, թե արդյոք տեղեկությունը կամ նյութը, այնուամենայնիվ, պետք է տրամադրվի, թե ոչ: Եթե հարցում ներկայացնող Կողմն ընդունում է պայմանը, ապա պետք է պարտադիր կատարի այն:

բ. Այդ պայմանին համապատասխան տեղեկություն կամ նյութ տրամադրող հարցվող Կողմը կարող է հարցում ներկայացնող Կողմից պահանջել պարզաբանել նման տեղեկության կամ նյութի օգտագործումն այդ պայմանի կատարման մասով:

Բաժին 4. Արտակարգ իրավիճակներում փոխադարձ օգնության տրամադրման ընթացակարգերը

Հոդված 10. Փոխադարձ օգնության տրամադրումն արտակարգ իրավիճակներում

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է պահանջել արագացված ընթացակարգով տրամադրվող փոխադարձ օգնություն, եթե Կողմն այն կարծիքին է, որ առկա է արտակարգ իրավիճակ: Սույն հոդվածի համաձայն ներկայացվող հարցումը պահանջվող այլ բովանդակությունից բացի ներառում է արտակարգ իրավիճակի առկայությունը հաստատող փաստերի նկարագրությունը, եւ թե ինչ առնչություն ունեն պահանջվող տվյալները դրա հետ:

2. Հարցվող Կողմն այդ հարցումն ընդունում է էլեկտրոնային եղանակով:

Նախքան հարցումն ընդունելը կարող է պահանջվել ապահովել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակներ:

3. Հարցումը գնահատելու նպատակով հարցվող Կողմը կարող է արագացված ընթացակարգով պահանջել լրացուցիչ տեղեկություններ: Հարցում ներկայացնող Կողմն այդ լրացուցիչ տեղեկությունները ներկայացնում է արագացված ընթացակարգով:

4. Համոզվելով, որ առկա է արտակարգ իրավիճակ, եւ երբ բավարարվում են փոխադարձ օգնության տրամադրման մյուս պահանջները, հարցված Կողմն արագացված ընթացակարգով պատասխանում է հարցմանը:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է փոխադարձ օգնություն տրամադրելու հարցումներին պատասխանելու համար պատասխանատու իր կենտրոնական մարմնի կամ այլ մարմինների կոնտակտային անձի՝ շաբաթը յոթ օր, քսանչորս ժամ հասանելիությունը՝ սույն հոդվածի համաձայն հարցումներին պատասխանելու նպատակով:

6. Հարցում ներկայացնող եւ հարցվող Կողմերի՝ փոխադարձ օգնության համար պատասխանատու կենտրոնական մարմինը կամ մյուս մարմինները կարող են փոխադարձաբար որոշել, որ սույն հոդվածի համաձայն հարցման կատարման արդյունքները կամ դրանց նախնական տարբերակը կարող է հարցում ներկայացնող Կողմին տրամադրվել հարցումը ներկայացնելու համար օգտագործված ուղուց տարբեր այլ ուղով:

7. Եթե հարցում ներկայացնող եւ հարցվող Կողմերի միջեւ չի գործում միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված՝ փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն, ապա Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2.բ պարբերությունը եւ 3-ից 8-րդ պարբերությունները եւ 28-րդ հոդվածի 2-ից 4-րդ պարբերությունները կիրառելի են սույն հոդվածի նկատմամբ:

8. Եթե գործում է նման պայմանագիր կամ պայմանավորվածություն, ապա

սույն հոդվածը լրացվում է այդ պայմանագրի կամ պայմանավորվածության դրույթներով, եթե շահագրգիռ Կողմերը փոխադարձաբար չեն որոշել դրանց փոխարեն կիրառել սույն հոդվածի 7-րդ պարբերության մեջ նշված՝ Կոնվենցիայի որևէ դրույթ կամ բոլոր դրույթները:

9. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ հարցումները կարող են ուղարկվել անմիջականորեն իր դատական մարմիններին կամ Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (ԻՆՏԵՐՊՈԼ) ուղիներով կամ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն սահմանված՝ շաբաթը յոթ օր, քսանչորս ժամ հասանելի համակարգող մարմին: Բոլոր այդ դեպքերում հարցում ներկայացնող Կողմի կենտրոնական մարմնի միջոցով հարցման պատճենը միեւնոյն ժամանակ ուղարկվում է հարցվող Կողմի կենտրոնական մարմին: Եթե հարցումն անմիջականորեն ուղարկվում է հարցվող Կողմի դատական մարմին, եւ այդ մարմինն իրավասու չէ պատասխանելու այդ հարցմանը, ապա այն հարցումն ուղարկում է իրավասու ազգային մարմին եւ այդ մասին անմիջականորեն տեղեկացնում հարցումը ներկայացնող Կողմին:

Բաժին 5. Միջազգային համագործակցության ընթացակարգերը՝ կիրառելի միջազգային համաձայնագրերի բացակայության պարագայում

Հոդված 11. Տեսակոնֆերանսների անցկացում

1. Հարցում ներկայացնող Կողմը կարող է պահանջել, իսկ հարցվող Կողմը կարող է թույլ տալ տեսակոնֆերանսի միջոցով վկաներից կամ փորձագետներից վերցնել ցուցմունքներ եւ հայտարարություններ: Հարցում ներկայացնող Կողմը եւ հարցվող Կողմը հարցումը կատարելու հետ կապված առաջացող խնդիրների վերաբերյալ որոշումների կայացումը դյուրացնելու նպատակով, այդ թվում՝ նաեւ ըստ անհրաժեշտության խորհրդակցում են հետեւյալ հարցերի շուրջ. ո՞ր Կողմն է

նախագահելու, այն մարմինները եւ անձինք, որոնք պետք է ներկա գտնվեն, արդյո՞ք մեկ Կողմը կամ երկու Կողմն էլ պետք է իրականացնեն վկաների կամ փորձագետների կոնկրետ երդման արարողակարգ, իրականացնեն զգուշացումներ կամ արձակեն ցուցումներ նրանց համար, վկայի կամ փորձագետի հարցաքննության կարգը, վկայի կամ փորձագետի իրավունքների պատշաճ ապահովման կարգը, արտոնությունների կամ անձեռնմխելիության իրավունքի հայտարարման դեպքերի քննարկումը, հարցերի կամ պատասխանների դեմ առարկությունների դեպքերի քննարկումը, եւ արդյոք մեկ Կողմը կամ երկու Կողմերն էլ պետք է ապահովեն գրավոր թարգմանության, բանավոր թարգմանության, սղագրության ծառայություններ:

2.ա. Սույն հոդվածի նպատակներով հարցվող եւ հարցում ներկայացնող Կողմերի կենտրոնական մարմիններն անմիջականորեն հաղորդակցվում են: Հարցվող Կողմը կարող է հարցումն ընդունել էլեկտրոնային եղանակով: Նախքան հարցումն ընդունելը կարող է պահանջվել ապահովել անվտանգության եւ իսկության հաստատման համապատասխան մակարդակներ:

բ. Հարցվող Կողմը հարցում ներկայացնող Կողմին տեղեկացնում է հարցումը չկատարելու կամ հարցման կատարումը հետաձգելու պատճառների մասին: Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 8-րդ պարբերությունը կիրառելի է սույն հոդվածի նկատմամբ: Չսահմանափակելով ցանկացած այլ պայման՝ հարցվող Կողմը կարող է սույն հոդվածին համապատասխան սահմանել, որ Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-ից 4-րդ պարբերությունները կիրառվում են սույն հոդվածի նկատմամբ:

3. Սույն հոդվածի համաձայն օգնություն տրամադրող հարցվող Կողմը փորձում է ապահովել այն անձի ներկայությունը, որից պահանջվում է ցուցմունք կամ հայտարարություն: Անհրաժեշտության դեպքում հարցվող Կողմը, հնարավորինս իր օրենսդրության շրջանակում, կարող է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վկային կամ փորձագետին հարկադրելու ներկայանալ հարցվող Կողմին՝ նշանակված ժամին եւ վայրում:

4. Պետք է հետեւել հարցումը ներկայացնող Կողմի կողմից

տեսակոնֆերանս անցկացնելու համար սահմանված ընթացակարգերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հակասում են հարցվող Կողմի ներպետական իրավունքին: Հակասության դեպքում կամ այնքանով, որքանով ընթացակարգը սահմանված չէ հարցումը ներկայացնող Կողմի կողմից, հարցվող Կողմը կիրառում է իր ներպետական իրավունքով նախատեսված ընթացակարգը, եթե հարցում ներկայացնող եւ հարցվող Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ բան չեն որոշել:

5. Չսահմանափակելով հարցում ներկայացնող Կողմի ներպետական իրավունքով նախատեսված իրավագործությունը, եթե տեսակոնֆերանսի ընթացքում վկան կամ փորձագետը՝

ա. միտումնավոր անում է կեղծ հայտարարություն այն դեպքում, երբ հարցվող Կողմն իր ներպետական իրավունքին համապատասխան պարտավորեցրել է այդ անձին տալ ճշմարիտ ցուցմունք,

բ. հրաժարվում է ցուցմունք տալուց այն դեպքում, երբ հարցվող Կողմն իր ներպետական իրավունքին համապատասխան պարտավորեցրել է այդ անձին ցուցմունք տալ,

գ. դրսևորում է ոչ պատշաճ վարքագիծ, որը հարցվող Կողմի ներպետական իրավունքով արգելվում է նման վարույթների ընթացքում,

ապա այդ անձը հարցվող Կողմի տարածքում ենթարկվում է պատասխանատվության այնպես, ինչպես եթե այդ արարքը կատարվեր վերջինիս ներպետական մակարդակով իրականացվող վարույթի ընթացքում:

6.ա. Եթե հարցում ներկայացնող Կողմի եւ հարցվող Կողմի միջեւ փոխադարձ համաձայնությամբ այլ բան որոշված չէ, ապա հարցվող Կողմը կրում է սույն հոդվածի համաձայն հարցման կատարման բոլոր ծախսերը, բացառությամբ՝

i. փորձագետ վկայի մասով վճարների.

ii. գրավոր թարգմանության, բանավոր թարգմանության եւ սղագրության ծախսերի.

iii. չնախատեսված ծախսերի:

բ. Եթե հարցման կատարումն առաջացնում է չնախատեսված ծախսեր, ապա հարցում ներկայացնող Կողմը եւ հարցվող Կողմը խորհրդակցում են միմյանց հետ՝ որոշելու համար այն պայմանները, որոնց համաձայն հարցումը կարող է կատարվել:

7. Հարցում ներկայացնող Կողմի եւ հարցվող Կողմի միջեւ փոխադարձ համաձայնության դեպքում՝

ա. սույն հոդվածի դրույթները կարող են կիրառվել տեսակոնֆերանս անցկացնելու նպատակներով.

բ. տեսակոնֆերանսի տեխնոլոգիան կարող է կիրառվել 1-ին պարբերության մեջ նշված նպատակներից կամ լսումներից բացի այլ դեպքերում, այդ թվում՝ անձանց կամ առարկաների նույնականացման նպատակներով:

8. Եթե հարցվող Կողմը որոշում է թույլատրել իրականացնել կասկածյալի կամ մեղադրյալի լսումները, ապա այն կարող է պահանջել այդ անձից ցուցմունք կամ հայտարարություն վերցնելու կամ նրան ծանուցելու կամ նրա նկատմամբ ընթացակարգային միջոցներ կիրառելու հետ կապված կոնկրետ պայմաններ եւ երաշխիքներ:

Հոդված 12. Քրեական գործով համատեղ քննության խմբերը եւ համատեղ իրականացվող քննությունները

1. Փոխադարձ համաձայնությամբ երկու կամ ավելի Կողմերի իրավասու մարմինները քրեական գործով քննությունների կամ վարույթների ընթացքը հեշտացնելու նպատակով կարող են իրենց տարածքներում ստեղծել եւ գործարկել քրեական գործով համատեղ քննության խումբ, որի դեպքում ուժեղացված համակարգումը համարվում է առանձնահատուկ օգտակար: Իրավասու մարմիններն ընտրվում են համապատասխան շահագրգիռ Կողմերի կողմից:

2. Քրեական գործով համատեղ քննության խմբերի գործունեությունը

կարգավորող ընթացակարգերը եւ պայմանները, ինչպես օրինակ՝ դրանց կոնկրետ նպատակները, կազմը, գործառույթները, տեւողությունը եւ երկարաձգման ժամկետները, գործունեության վայրը, կազմակերպումը, տեղեկություններ կամ ապացույցներ հավաքելու, փոխանցելու եւ օգտագործելու պայմանները, գաղտնիության պայմանները եւ Կողմի մասնակից մարմինների՝ մյուս Կողմի տարածքում իրականացվող քննչական գործողություններում ներգրավվելու պայմանները համաձայնեցվում են այդ իրավասու մարմինների միջեւ:

3. Կողմը սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ իր կենտրոնական մարմինը պետք է հանդիսանա խումբը ստեղծելու մասին համաձայնագրի ստորագրող Կողմ կամ որեւէ այլ կերպ տա իր համաձայնությունը:

4. Այդ իրավասու եւ մասնակցող մարմինները հաղորդակցվում են անմիջականորեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ ընտրել հաղորդակցման այլ պատշաճ ուղիներ, որոնց դեպքում բացառիկ հանգամանքները պահանջում են ավելի կենտրոնացված համակարգում:

5. Եթե շահագրգիռ Կողմերից մեկի տարածքում անհրաժեշտ է իրականացնել քննչական գործողություններ, ապա այդ Կողմի մասնակցող մարմինները կարող են իրենց մարմիններից պահանջել այդ գործողություններն իրականացնել առանց մյուս Կողմի կողմից փոխադարձ օգնության հարցում ներկայացնելու պահանջի: Այդ գործողություններն իրականացվում են այդ Կողմի մարմինների կողմից իր տարածքում՝ ազգային մակարդակով իրականացվող քննության մասով ներպետական իրավունքով սահմանված պայմանների համաձայն:

6. Մեկ Կողմի մասնակցող մարմինների կողմից մյուս շահագրգիռ Կողմերի մասնակցող մարմիններին տրամադրված տեղեկությունների կամ ապացույցների օգտագործումը կարող է մերժվել կամ սահմանափակվել 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված համաձայնագրով սահմանված կարգով: Եթե այդ

համաձայնագրում չեն սահմանվում օգտագործումը մերժելու կամ սահմանափակելու պայմանները, ապա Կողմերը կարող են օգտագործել այն տեղեկությունները կամ ապացույցները, որոնք տրամադրվել են՝

ա. այն նպատակներով, որոնց համար կնքվել է համաձայնագիրը.

բ. այն քրեական իրավախախտումներից տարբեր քրեական իրավախախտումները բացահայտելու, քննելու եւ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով, որոնց համար կնքվել է համաձայնագիրը՝ տեղեկությունը կամ ապացույցը տրամադրող մարմինների նախնական համաձայնության դեպքում: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալի իրավունքները պաշտպանելու համար տեղեկությունը կամ ապացույցն օգտագործող Կողմի հիմնարար իրավական սկզբունքները պահանջում են հրապարակել տեղեկությունը կամ ապացույցը, համաձայնություն չի պահանջվում: Այդ դեպքում այդ մարմիններն առանց անհարկի ուշացման ծանուցում են տեղեկությունը կամ ապացույցը տրամադրող մարմիններին. կամ

գ. արտակարգ իրավիճակը կանխարգելելու նպատակով: Այդ դեպքում տեղեկությունը կամ ապացույցն ստացած մասնակցող մարմիններն առանց անհարկի ուշացման ծանուցում են տեղեկությունը կամ ապացույցը տրամադրող՝ մասնակցող մարմիններին, եթե փոխադարձաբար այլ բան չի որոշվել:

7. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված համաձայնագրի բացակայության դեպքում քրեական գործով համատեղ քննությունները կարող են իրականացվել առանձին դեպքերում փոխադարձաբար համաձայնեցված պայմաններով: Այս պարբերությունը կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե արդյոք շահագրգիռ Կողմերի միջեւ գործում է միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա կնքված փոխադարձ օգնության մասին պայմանագիր կամ պայմանավորվածություն, թե ոչ:

Գլուխ III. Պայմանները եւ երաշխիքները

Հոդված 13. Պայմանները եւ երաշխիքները

Կոնվենցիայի 15-րդ հոդվածին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն արձանագրությամբ նախատեսված լիազորությունների եւ ընթացակարգերի սահմանումը, իրագործումը եւ կիրառումն իրականացվեն իր ներպետական իրավունքով սահմանված պայմաններին ու երաշխիքներին համապատասխան, որոնք կապահովեն մարդու իրավունքների եւ ազատությունների պատշաճ պաշտպանությունը:

Հոդված 14. Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Գործողության շրջանակը

ա. Բացառությամբ 1.բ եւ 1.գ պարբերություններով նախատեսված դեպքերի՝ յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրության համաձայն ստացված անձնական տվյալները մշակում է սույն հոդվածի 2-ից 15-րդ պարբերություններին համապատասխան:

բ. Եթե սույն արձանագրության համաձայն անձնական տվյալներն ստանալիս եւ՝ փոխանցող Կողմը, եւ՝ ստացող Կողմն ստանձնել են պարտավորություններ այդ Կողմերի միջեւ անձնական տվյալների պաշտպանության համապարփակ շրջանակ ձեւավորելու մասին միջազգային համաձայնագրով, որը կիրառելի է քրեական իրավախախտումների կանխարգելման, բացահայտման, քննության եւ քրեական հետապնդման նպատակով անձնական տվյալների փոխանցման դեպքում, եւ որը սահմանում է, որ այդ համաձայնագրի համաձայն տվյալների մշակումը համապատասխանում է շահագրգիռ Կողմերի՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության պահանջներին, ապա այդ համաձայնագրի գործողության շրջանակում գտնվող գործողությունների դեպքում սույն արձանագրության համաձայն ստացված

անձնական տվյալների նկատմամբ 2-ից 15-րդ պարբերությունների փոխարեն կիրառվում են այդ համաձայնագրի պայմանները, եթե շահագրգիռ Կողմերի միջև այլ բան չի համաձայնեցվել:

գ. Եթե փոխանցող Կողմը եւ ստացող Կողմը 1.բ պարբերության մեջ նշված համաձայնագրով չեն ստանձնել փոխադարձ պարտավորություններ, ապա նրանք կարող են փոխադարձաբար որոշել, որ սույն արձանագրության համաձայն անձնական տվյալների փոխանցումը 2-ից 15-րդ պարբերությունների փոխարեն կարող է իրականացվել շահագրգիռ Կողմերի միջև այլ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների հիման վրա:

դ. Յուրաքանչյուր Կողմ համարում է, որ 1.ա եւ 1.բ պարբերությունների համաձայն անձնական տվյալների մշակումը համապատասխանում է անձնական տվյալների միջազգային փոխանցման համար նախատեսված՝ անձնական տվյալների պաշտպանության մասով իր իրավական շրջանակի պահանջներին, եւ որ այդ իրավական շրջանակի համաձայն փոխանցման համար չի պահանջվում լրացուցիչ թույլտվություն: Կողմը կարող է հրաժարվել սույն արձանագրության համաձայն մյուս Կողմին տվյալների փոխանցումից կամ խոչընդոտել այն՝ բացառապես 15-րդ պարբերությամբ սահմանված պայմանների համաձայն տվյալների պաշտպանության նկատառումներով, երբ կիրառվում է 1.ա պարբերությունը, կամ 1.բ կամ 1.գ պարբերություններում նշված համաձայնագրի կամ պայմանավորվածության համաձայն, երբ կիրառվում է այդ պարբերություններից որեւէ մեկը:

ե. Սույն հոդվածով նախատեսված որեւէ դրույթ չի խոչընդոտում որեւէ Կողմի՝ կիրառելու ավելի խիստ երաշխիքներ իր մարմինների կողմից սույն արձանագրության համաձայն ստացված անձնական տվյալների մշակման նկատմամբ:

2. Նպատակը եւ կիրառությունը

ա. Անձնական տվյալներ ստացող Կողմը դրանք մշակում է 2-րդ հոդվածում

նշված նպատակներով: Այն չի մշակում անձնական տվյալները նշված նպատակների հետ չհամընկնող նպատակով եւ այն չի մշակում տվյալները, եթե իր ներպետական իրավական շրջանակով չի թույլատրվում դա անել: Սույն հոդվածը չի սահմանափակում փոխանցող Կողմի՝ հատուկ դեպքերում սույն արձանագրության համաձայն լրացուցիչ պայմաններ սահմանելու հնարավորությունը, այնուամենայնիվ, այդ պայմանները չպետք է ներառեն տվյալների պաշտպանության ընդհանուր պայմաններ:

բ. Ստացող Կողմն իր ներպետական իրավական շրջանակի համաձայն ապահովում է, որ պահանջվող եւ մշակվող տվյալները վերաբերեն այդ մշակման նպատակներին եւ չունենան չափից մեծ ծավալներ:

3. Որակը եւ ամբողջականությունը

Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է ողջամիտ քայլեր՝ ապահովելու, որ անձնական տվյալները պահպանվեն այնպիսի ճշգրտությամբ ու ամբողջականությամբ եւ լինեն այնքան թարմ, որքան անհրաժեշտ է եւ նպատակահարմար՝ անձնական տվյալների օրինական մշակման համար՝ հաշվի առնելով այն նպատակները, որոնց համար մշակվում են դրանք:

4. Զգայուն տվյալները

Ռասայական կամ էթնիկական ծագումը, քաղաքական հայացքները կամ կրոնական կամ այլ համոզմունքներ կամ արհեստակցական միությանն անդամակցությունը, գենետիկական տվյալները, կենսաչափական տվյալները բացահայտող անձնական տվյալները, որոնք ենթադրվող ռիսկերի տեսանկյունից համարվում են զգայուն տվյալներ, կամ առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող անձնական տվյալները Կողմի կողմից մշակելն իրականացվում է բացառապես համապատասխան երաշխիքների ապահովմամբ՝ այդ տվյալների օգտագործման չիմնավորված վնասակար ազդեցության ռիսկից, մասնավորապես՝ անօրինական խտրականությունից պաշտպանելու համար:

5. Պահման ժամկետները

Յուրաքանչյուր Կողմ անձնական տվյալները պահում է բացառապես այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է եւ նպատակահարմար՝ 2-րդ պարբերության համաձայն տվյալների մշակման նպատակներով: Այս պարտավորությունը կատարելու նպատակով վերջինիս ներպետական իրավական շրջանակով պետք է նախատեսվեն պահման հատուկ ժամկետներ կամ տվյալների հետագա պահման անհրաժեշտության պարբերական վերանայում:

6. Ավտոմատացված որոշումները

Այն որոշումները, որոնք ունենում են զգալի բացասական ազդեցություն այն անձի համապատասխան շահերի վրա, որին վերաբերում են անձնական տվյալները, չեն կարող հիմնվել բացառապես անձնական տվյալների ավտոմատացված մշակման վրա, եթե դրանք թույլատրված չեն ներպետական իրավունքով եւ պաշտպանված չեն պատշաճ երաշխիքներով, որոնք ներառում են մարդկային միջամտության հնարավորությունները:

7. Տվյալների անվտանգությունը եւ անվտանգության հետ կապված միջադեպերը

ա. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է անձնական տվյալների պաշտպանության, մասնավորապես՝ տվյալների կորստի կամ պատահական կամ չթույլատրված մուտքը, հրապարակումը, փոփոխումը կամ վերացումը (անվտանգության հետ կապված միջադեպեր) բացառող պատշաճ տեխնոլոգիաների, ֆիզիկական եւ կազմակերպական միջոցների հասանելիությունը:

բ. Անհատներին կամ մյուս Կողմին ֆիզիկական կամ ոչ ֆիզիկական վնասի զգալի ռիսկ պարունակող՝ անվտանգության հետ կապված որեւէ միջադեպ բացահայտելու դեպքում ստացող Կողմն անմիջապես գնահատում է դրանց հավանականությունը եւ ծավալները եւ անմիջապես ձեռնարկում է պատշաճ գործողություններ՝ այդ վնասը մեղմացնելու համար: Այդ գործողությունները ներառում են փոխանցող մարմնին ծանուցումը, իսկ II գլխի 2-րդ բաժնի նպատակներով՝ 7.գ պարբերության համաձայն նշանակված մարմնին կամ

մարմիններին ծանուցումը: Այնուամենայնիվ, ծանուցումը կարող է ներառել ծանուցման հետագա փոխանցման հետ կապված սահմանափակումներ, այն կարող է հետաձգվել կամ չուղարկվել, եթե այդ ծանուցումը կարող է վտանգել ազգային անվտանգությունը, կամ հետաձգվել, եթե այդ ծանուցումը կարող է վտանգել հանրային անվտանգության միջոցների իրականացումը: Այդ գործողությունները ներառում են նաև շահագրգիռ անհատներին ծանուցումը, եթե Կողմը չի ձեռնարկել պատշաճ միջոցներ, որոնց դեպքում զգալի ռիսկեր այլևս առկա չեն: Անհատին ծանուցումը կարող է հետաձգվել կամ չուղարկվել 12.ա.ի պարբերության մեջ նշված պայմանների դեպքում: Ծանուցվող Կողմը կարող է պահանջել անցկացնել խորհրդակցություն եւ տրամադրել լրացուցիչ տեղեկություններ միջադեպի եւ դրան արձագանքելու վերաբերյալ:

գ. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին փոխանցում է տեղեկություններ այն մարմնի կամ մարմինների մասին, որոնք պետք է II գլխի 2-րդ բաժնի նպատակներով ծանուցվեն 7.բ պարբերության համաձայն. ներկայացված տեղեկությունները հետագայում կարող են փոփոխվել:

8. Գրառումների կատարումը

Յուրաքանչյուր Կողմ կատարում է գրառումներ կամ կիրառում է այլ պատշաճ միջոցներ՝ ցույց տալու համար, թե ինչպես են առանձին դեպքերում ապահովվում անհատի անձնական տվյալների հասանելիությունը, օգտագործվում կամ հրապարակվում դրանք:

9. Հետագա տրամադրում Կողմի մարմիններին

ա. Երբ Կողմի որեւէ մարմին ի սկզբանե սույն արձանագրության համաձայն ստացված անձնական տվյալները տրամադրում է այդ Կողմի մեկ այլ մարմնի, այդ մյուս մարմինն այդ տվյալները մշակում է սույն հոդվածին համապատասխան՝ 9.բ պարբերության համաձայն:

բ. Չհակասելով 9.ա պարբերությանը՝ 17-րդ հոդվածի մասով վերապահում

կատարած Կողմը կարող է իր կողմից ստացված տվյալները տրամադրել իր մասը կազմող պետություններին կամ համարժեք տարածքային սուբյեկտներին՝ պայմանով, որ այդ Կողմն ունի գործող այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են ստացող մարմինների կողմից տվյալների շարունակական արդյունավետ պաշտպանությունը՝ ապահովելով տվյալների պաշտպանության այնպիսի մակարդակ, որը համեմատելի է սույն հոդվածով նախատեսված պաշտպանության մակարդակին:

գ. Եթե առկա են այս պարբերությունը ոչ պատշաճ կատարելու նախադրյալներ, ապա փոխանցող Կողմը կարող է պահանջել այդ նախադրյալների վերաբերյալ խորհրդակցություն եւ համապատասխան տեղեկությունների տրամադրում:

10. Այլ պետության կամ միջազգային կազմակերպությանը հետագա փոխանցումը

ա. Ստացող Կողմը կարող է անձնական տվյալները փոխանցել այլ պետության կամ միջազգային կազմակերպությանը բացառապես այն դեպքերում, երբ ստացել է փոխանցող մարմնի, իսկ II գլխի 2-րդ բաժնի նպատակներով՝ 10.բ պարբերության համաձայն նշանակված մարմնի կամ մարմինների նախնական թույլտվությունը:

բ. Յուրաքանչյուր Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին փոխանցում է տեղեկություններ այն մարմնի կամ մարմինների վերաբերյալ, որոնք պետք է II գլխի 2-րդ բաժնի նպատակներով տան թույլտվություն. ներկայացված տեղեկությունները հետագայում կարող են փոփոխվել:

11. Թափանցիկությունը եւ ծանուցումը

ա. Յուրաքանչյուր Կողմ այն անհատին, որի մասով հավաքվել են անձնական տվյալները, ընդհանուր ծանուցումների կամ այդ անհատին ներկայացվող անհատական ծանուցման միջոցով ծանուցում է՝

i. մշակման իրավական հիմքերի եւ նպատակի (նպատակների) վերաբերյալ,

ii. անհրաժեշտության դեպքում՝ 5-րդ պարբերության համաձայն պահման կամ վերանայման ժամկետների վերաբերյալ,

iii. այն ստացողների կամ ստացողների կատեգորիաների վերաբերյալ, որի համար հրապարակվում են այդ տվյալները, եւ

iv. տվյալների հասանելիության, սխալի վերացման եւ փոխհատուցման հասանելի միջոցների վերաբերյալ:

բ. Կողմը կարող է ցանկացած անհատական ծանուցման պահանջների մասով սահմանել վերջինիս ներպետական իրավական շրջանակով նախատեսված ողջամիտ սահմանափակումներ՝ 12.ա.ի պարբերության մեջ նշված պայմանների համաձայն:

գ. Եթե փոխանցող Կողմի ներպետական իրավական շրջանակով պահանջվում է անհատական ծանուցում ուղարկել այն անձին, որի մասին մյուս Կողմին տրամադրվել են տվյալներ, ապա փոխանցող Կողմը ձեռնարկում է միջոցներ՝ փոխանցման պահին այդ պահանջի եւ համապատասխան կոնտակտային տվյալների վերաբերյալ մյուս Կողմին ծանուցելու համար: Անհատական ծանուցում չի տրվում, եթե մյուս Կողմը պահանջել է, որ տվյալների տրամադրումն իրականացվի գաղտնի, ինչպիսի դեպքերում կիրառվում են 12.ա.ի պարբերությամբ նախատեսված սահմանափակման պայմանները: Երբ այդ սահմանափակումներն այլևս կիրառելի չեն, եւ կարող է տրամադրվել անհատական ծանուցում, մյուս Կողմը ձեռնարկում է փոխանցող Կողմին այդ մասին տեղեկացնելու միջոցներ: Եթե այդ մասին դեռևս չի տեղեկացվել, ապա փոխանցող Կողմն իրավունք ունի ներկայացնելու հարցումներ ստացող Կողմին, որը տեղեկացնում է փոխանցող Կողմին այն մասին, թե արդյոք անհրաժեշտ է պահպանել սահմանափակումը:

12. Տվյալների հասանելիությունը եւ շտկումը

ա. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ցանկացած անհատ, որի վերաբերյալ սույն արձանագրության համաձայն ստացվել են անձնական տվյալներ, իրավունք ունենա այդ Կողմի ներպետական իրավական շրջանակով սահմանված գործընթացներին համապատասխան եւ առանց անհարկի ուշացման պահանջելու եւ ստանալու հետեւյալ տվյալները.

i. այդ անհատի վերաբերյալ պահվող գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի օրինակը, որը պարունակում է անձնական տվյալներ այդ անհատի վերաբերյալ, եւ հասանելի տեղեկություններ՝ մշակման իրավական հիմքերի եւ նպատակների, պահման ժամկետների մասին եւ տվյալներն ստացողների կամ ստացողների կատեգորիաների վերաբերյալ (հասանելիություն), ինչպես նաեւ տեղեկություններ՝ փոխհատուցման հասանելի տարբերակների վերաբերյալ, պայմանով, որ կոնկրետ դեպքում դրանց հասանելիության մասով կարող են կիրառվել վերջինիս ներպետական իրավական շրջանակով նախատեսված համաչափ սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են գործով որոշում կայացնելիս այլոց իրավունքներն ու ազատությունները կամ ընդհանուր հանրային շահերի կարեւոր նպատակները պաշտպանելու համար, եւ որոնք պատշաճ կերպով հաշվի են առնում տվյալ անհատի իրավաչափ շահերը.

ii. սխալի վերացում, երբ անհատի անձնական տվյալները ճշգրիտ չեն կամ պատշաճ կերպով չեն մշակվել. անհրաժեշտության եւ նպատակահարմարության դեպքում հաշվի առնելով սխալը վերացնելու հիմքերը եւ մշակման կոնկրետ համատեքստը՝ սխալի վերացումը ներառում է ուղղումը, լրացումը, ջնջումը կամ անանունացումը, մշակման սահմանափակումները կամ արգելափակումը:

բ. Եթե հասանելիությունը կամ սխալը վերացնելու հնարավորությունը մերժվում կամ սահմանափակվում է, ապա Կողմը, առանց անհարկի ուշացման, անհատին ներկայացնում է գրավոր պատասխան, որը կարող է ներկայացվել նաեւ էլեկտրոնային եղանակով՝ այդ անհատին տեղեկացնելով մերժման կամ սահմանափակման մասին: Դրանով պետք է ներկայացվեն այդ մերժման կամ

սահմանափակման հիմքերը, եւ տրամադրվեն տեղեկություններ փոխհատուցման հասանելի տարբերակների վերաբերյալ: Տվյալներին հասանելիություն ստանալու հետ կապված առաջացող ցանկացած ծախս պետք է լինի ողջամիտ եւ չափավոր սահմաններում:

13. Դատական եւ ոչ դատական իրավական պաշտպանության միջոցները

Յուրաքանչյուր Կողմ պետք է ունենա սույն հոդվածի խախտումների դեպքերում փոխհատուցում տրամադրելու համար նախատեսված դատական եւ ոչ դատական գործող իրավական պաշտպանության միջոցներ:

14. Վերահսկողությունը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ունենա գործող մեկ կամ ավելի հանրային մարմին, որն առանձին կամ որեւէ այլ մարմնի հետ համատեղ իրականացնում է անկախ եւ արդյունավետ վերահսկողության գործառույթներ եւ լիազորություններ սույն հոդվածում նշված միջոցների մասով: Առանձին կամ որեւէ այլ մարմնի հետ համատեղ գործող այս մարմինների գործառույթները եւ լիազորությունները ներառում են քննություն իրականացնելու լիազորությունը, բողոքներին արձագանքելու լիազորությունը եւ ուղղիչ գործողություններ ձեռնարկելու հնարավորությունը:

15. Խորհրդակցությունը եւ կասեցումը

Կողմը կարող է կասեցնել տվյալների փոխանցումը մյուս Կողմին, եթե այն ունի էական ապացույց, որ մյուս Կողմը պարբերաբար կամ էապես խախտում է սույն հոդվածի պայմանները, կամ որ էական խախտումն անխուսափելի է: Այն չպետք է կասեցնի փոխանցումները՝ առանց ողջամիտ ժամկետում ներկայացված ծանուցման, եւ քանի դեռ շահագրգիռ Կողմերը ողջամիտ ժամկետում չեն խորհրդակցել եւ որոշում չեն կայացրել: Այնուամենայնիվ, Կողմը կարող է ժամանակավորապես կասեցնել փոխանցումները, եթե կատարվում են կյանքին կամ անվտանգությանը սպառնացող զգալի եւ ակնհայտ ռիսկեր առաջացնող կամ ֆիզիկական անձի հեղինակությանը կամ ֆինանսական զգալի վնաս հասցնող պարբերական կամ էական խախտումներ, ինչի դեպքում անմիջապես այդ

խախտումներից հետո այն ծանուցում է մյուս Կողմին եւ սկսում խորհրդակցություններ վերջինիս հետ: Եթե խորհրդակցության արդյունքում չի կայացվում որոշում, ապա մյուս Կողմը փոխադարձաբար կարող է կասեցնել փոխանցումը, եթե այն ունի էական ապացույց, որ կասեցնող Կողմի կողմից կատարված կասեցումը հակասում է սույն պարբերության պայմաններին: Կասեցնող Կողմը վերացնում է կասեցումը, երբ կասեցումը հիմնավորող խախտումը շտկվում է. այդ ժամանակ վերացվում է ցանկացած փոխադարձ կասեցում: Աշխատանքը կասեցումից առաջ փոխանցված ցանկացած անձնական տվյալի հետ շարունակվում է՝ սույն արձանագրության համաձայն:

Գլուխ IV. Եզրափակիչ դրույթները

Հոդված 15. Սույն արձանագրության ազդեցությունը

1.ա. Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը կիրառելի է սույն արձանագրության նկատմամբ:

բ. Ինչ վերաբերում է Եվրոպական միության անդամ հանդիսացող Կողմերին, ապա այդ Կողմերն իրենց փոխադարձ հարաբերություններում կարող են կիրառել սույն արձանագրության առարկա հանդիսացող հարցերը կարգավորող՝ Եվրոպական միության իրավունքը:

գ. 1.բ պարբերությունը չի ազդում Եվրոպական միության անդամ հանդիսացող Կողմերի եւ մյուս Կողմերի միջեւ սույն արձանագրության ամբողջական կիրառության վրա:

2. Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը կիրառելի է սույն արձանագրության նկատմամբ:

Հոդված 16. Ստորագրումը եւ ուժի մեջ մտնելը

1. Սույն արձանագրությունը բաց է Կոնվենցիայի Կողմերի կողմից ստորագրման համար, որոնք կարող են հայտնել իրենց համաձայնությունը դրանով

պարտավորված լինելու վերաբերյալ՝

ա. ստորագրմամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման առնչությամբ վերապահման, կամ

բ. վավերացումից, ընդունումից կամ հաստատումից հետո վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա ստորագրմամբ:

2. Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Կոնվենցիայի հինգ Կողմեր սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան հայտնել են սույն արձանագրությամբ պարտավորված լինելու վերաբերյալ իրենց համաձայնությունը:

4. Կոնվենցիայի ցանկացած Կողմի մասով, որը հետագայում հայտնում է սույն արձանագրությամբ պարտավորված լինելու վերաբերյալ իր համաձայնությունը, արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Կողմը, սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան, հայտնել է սույն արձանագրությամբ պարտավորված լինելու վերաբերյալ իր համաձայնությունը:

Հոդված 17. Դաշնային դրույթը

1. Դաշնային պետությունը կարող է իրավունք վերապահել ստանձնելու սույն արձանագրությամբ նախատեսված պարտավորությունները, որոնք համահունչ են իր կենտրոնական կառավարության եւ իր մասը կազմող պետությունների կամ համարժեք տարածքային սուբյեկտների միջեւ հարաբերությունները կարգավորող հիմնարար սկզբունքներին, պայմանով, որ՝

ա. արձանագրությունը կիրառվում է դաշնային պետության կենտրոնական կառավարության նկատմամբ,

բ. այդ վերապահումը չի ազդում մյուս Կողմերի կողմից II գլխի դրույթներին համապատասխան պահանջվող համագործակցությունն ապահովելու պարտավորությունների վրա, եւ

գ. 13-րդ հոդվածի դրույթները կիրառվում են դաշնային պետության մասը կազմող պետության կամ համարժեք այլ տարածքային սուբյեկտների նկատմամբ:

2. Մյուս Կողմը կարող է չթույլատրել իր տարածքում գործող մարմինների, ծառայություն մատուցողների կամ սուբյեկտների՝ 1-ին պարբերության համաձայն վերապահում կատարած դաշնային պետության մաս կազմող պետության կամ այլ համարժեք տարածքային սուբյեկտների կողմից անմիջականորեն ներկայացված հարցմանը կամ կարգադրությանն ի պատասխան իրականացվող համագործակցությունը, եթե այդ դաշնային պետությունը չի ծանուցում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին՝ մաս կազմող պետության կամ այլ համարժեք տարածքային սուբյեկտի կողմից սույն արձանագրության՝ այդ դաշնային պետության համար կիրառելի պարտավորությունները կիրառելու մասին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կազմում է այդ ծանուցումների ռեզիստր եւ թարմացնում այն:

3. Մյուս Կողմը թույլատրում է իր տարածքում գործող մարմինների, ծառայություն մատուցողների կամ սուբյեկտների՝ 1-ին պարբերության համաձայն վերապահման հիմքով դաշնային պետության մաս կազմող պետության կամ այլ համարժեք տարածքային սուբյեկտների կողմից անմիջականորեն ներկայացված հարցմանը կամ կարգադրությանն ի պատասխան իրականացվող համագործակցությունը, եթե կարգադրությունը կամ հարցումը ներկայացվել է կենտրոնական կառավարության միջոցով կամ 12-րդ հոդվածի համաձայն կենտրոնական կառավարության մասնակցությամբ կնքվել է քրեական գործով համատեղ քննության խումբ ստեղծելու մասին համաձայնագիր: Այդ իրավիճակներում, կենտրոնական կառավարությունը նախատեսում է

արձանագրության կիրառելի պարտավորությունների կատարում՝ պայմանով, որ մաս կազմող պետություններին կամ համարժեք տարածքային սուբյեկտներին տրամադրվող անձնական տվյալների պաշտպանության մասով կիրառվում են միայն 14-րդ հոդվածի 9-րդ պարբերության պայմանները կամ համապատասխան դեպքերում՝ 14-րդ հոդվածի 1.բ պարբերության կամ 1.գ պարբերության մեջ նշված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների պայմանները:

4. Ինչ վերաբերում է սույն արձանագրության դրույթներին, որոնց կիրառումը մաս կազմող այն պետությունների կամ համարժեք տարածքային սուբյեկտների իրավասության շրջանակում է, որոնք դաշնության սահմանադրական համակարգի շրջանակում պարտավորված չեն ձեռնարկել օրենսդրական միջոցներ, ապա կենտրոնական կառավարությունն իր դրական կարծիքի հետ միասին այդ պետության իրավասու մարմիններին տեղեկացնում է նշված դրույթների մասին՝ խրախուսելով նրանց ձեռնարկել այդ դրույթներն ուժի մեջ դնելուն ուղղված համապատասխան գործողություններ:

Հոդված 18. Տարածքային կիրառումը

1. Սույն արձանագրությունը կիրառելի է Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն Կողմի կողմից արված հայտարարության մեջ նշված տարածքի կամ տարածքների նկատմամբ այնքանով, որքանով այդ հայտարարությունը հետ չի կանչվել 38-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն:

2. Կողմը սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ սույն արձանագրությունը չի կիրառվում Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին եւ (կամ) 2-րդ պարբերությունների համաձայն Կողմի կողմից արված հայտարարության մեջ նշված մեկ կամ մի քանի տարածքների նկատմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն արված

հայտարարությունը կարող է հետ կանչվել այդ հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի առնչությամբ՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ: Հետկանչումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալու ամսաթվից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 19. Վերապահումները եւ հայտարարությունները

1. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված գրավոր ծանուցմամբ Կոնվենցիայի ցանկացած Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է հայտարարել, որ ինքն օգտվում է սույն արձանագրության 7-րդ հոդվածի 9.ա եւ 9.բ պարբերություններով, 8-րդ հոդվածի 13-րդ պարբերությամբ եւ 17-րդ հոդվածով նախատեսված վերապահումներից: Այլ վերապահումներ չեն կարող կատարվել:

2. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված գրավոր ծանուցմամբ Կոնվենցիայի ցանկացած Կողմ սույն արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է ներկայացնել սույն արձանագրության 7-րդ հոդվածի 2.բ եւ 8-րդ պարբերության, 8-րդ հոդվածի 11-րդ պարբերության, 9-րդ հոդվածի 1.բ եւ 5-րդ պարբերության, 10-րդ հոդվածի 9-րդ պարբերության, 12-րդ հոդվածի 3-րդ պարբերության եւ 18-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված հայտարարությունը (հայտարարությունները):

3. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված գրավոր ծանուցմամբ ցանկացած Կողմ կարող է ներկայացնել 7-րդ հոդվածի 5.ա եւ 5.ե պարբերության, 8-րդ հոդվածի 4-րդ եւ 10.ա եւ 10.բ պարբերությունների, 14-րդ հոդվածի 7.գ եւ 10.բ պարբերությունների եւ 17-րդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ

նշված ցանկացած հայտարարություն (հայտարարություններ), ծանուցում կամ հաղորդում՝ նշված կետերում սահմանված պայմանների համաձայն:

Հոդված 20. Վերապահումների կարգավիճակը եւ հետկանչը

1. 19-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան վերապահում կատարած Կողմն ամբողջությամբ կամ մասամբ հանում է այդ վերապահումն անմիջապես այն բանից հետո, երբ հանգամանքները թույլ են տալիս դա անել: Այդ վերապահման հետկանչն ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցումն ստանալու օրը: Եթե ծանուցման մեջ նշվում է, որ վերապահման հետկանչն ուժի մեջ է մտնում ծանուցման մեջ նշված օրը, եւ այդ օրն ավելի ուշ է, քան Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրը, ապա վերապահման հետկանչն ուժի մեջ է մտնում այդ ավելի ուշ օրը:

2. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կարող է պարբերաբար հարցում կատարել այն Կողմերի վերաբերյալ, որոնք 19-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան կատարել են մեկ կամ ավելի վերապահումներ՝ այդ վերապահումը (վերապահումները) հետ կանչելու հեռանկարների մասով:

Հոդված 21. Փոփոխությունները

1. Սույն արձանագրության մեջ կատարվող փոփոխությունները կարող են առաջարկվել արձանագրության ցանկացած Կողմի կողմից եւ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվում են Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին եւ Կոնվենցիայի Կողմերին եւ ստորագրող Կողմերին, ինչպես նաեւ այն պետությունների, որոնք հրավիրվել են միանալու Կոնվենցիային:

2. Կողմի կողմից առաջարկված ցանկացած փոփոխություն ներկայացվում է Քրեական հարցերով եվրոպական կոմիտեին (ՔՀԵԿ), որն այդ փոփոխության վերաբերյալ իր կարծիքը ներկայացնում է Նախարարների կոմիտե:

3. Նախարարների կոմիտեն դիտարկում է առաջարկված փոփոխությունը եւ ՔՀԵԿ-ի կողմից ներկայացված կարծիքը եւ Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է ընդունել փոփոխությունը:

4. 3-րդ պարբերությանը համապատասխան՝ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ցանկացած փոփոխության տեքստ ուղարկվում է սույն արձանագրության Կողմերին՝ ընդունման համար:

5. 3-րդ պարբերությանը համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում սույն արձանագրության բոլոր Կողմերի կողմից Գլխավոր քարտուղարին այդ փոփոխություններն ընդունելու մասին տեղեկացնելուց հետո երեսուներորդ օրը:

Հոդված 22. Վեճերի լուծումը

Կոնվենցիայի 45-րդ հոդվածը կիրառելի է սույն արձանագրության նկատմամբ:

Հոդված 23. Կողմերի հետ խորհրդակցությունները եւ իրականացման գնահատումը

1. Կոնվենցիայի 46-րդ հոդվածը կիրառելի է սույն արձանագրության նկատմամբ:

2. Կողմերը պարբերաբար գնահատում են սույն արձանագրության դրույթների արդյունավետ կիրառումը եւ իրականացումը: «Կիբեռահանցագործությունների մասին» կոնվենցիայի հարցերով կոմիտեի ընթացակարգային կանոնների 2-րդ հոդվածը՝ փոփոխված 2020 թվականի հոկտեմբերի 16-ին, կիրառվում է համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*): Կողմերը սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարի անց սույն արձանագրությունը կիրառելիս նախապես վերանայում են այդ հոդվածով սահմանված ընթացակարգերը եւ փոխադարձ համաձայնությամբ

կարող են փոփոխել դրանք:

3. 14-րդ հոդվածի վերանայումը մեկնարկում է, երբ Կոնվենցիայի տասը Կողմ հայտնել են սույն արձանագրությանը պարտավորված լինելու վերաբերյալ իրենց համաձայնությունը:

Հոդված 24. Զեղյալ հայտարարելը

1. Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով կարող է չեղյալ հայտարարել սույն արձանագրությունը:

2. Զեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն՝ ստանալուց հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Սույն արձանագրության Կողմի կողմից Կոնվենցիան չեղյալ հայտարարելը համարվում է սույն արձանագրության չեղյալ հայտարարում:

4. Մինչև չեղյալ հայտարարելն ուժի մեջ մտնելու ամսաթիվը փոխանցված տեղեկության կամ ապացույցի հետ աշխատանքը շարունակվում է սույն արձանագրությանը համապատասխան:

Հոդված 25. Ծանուցումը

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Կոնվենցիայի Կողմերին եւ ստորագրող Կողմերին, Կոնվենցիային միանալու հրավեր ստացած ցանկացած պետության ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին,

բ. վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ցանկացած

փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,

գ. սույն արձանագրությունը 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերություններին համապատասխան ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին,

դ. 19-րդ հոդվածին համապատասխան կատարված ցանկացած հայտարարության կամ վերապահման կամ 20-րդ հոդվածին համապատասխան վերապահումները հետ կանչելու մասին,

ե. սույն արձանագրությանն առնչվող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն արձանագրությունը:

Կատարված է [.....] [2022 թվականի.....], հայերենով և ֆրանսերենով, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակից, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Կոնվենցիայի Կողմերին և ստորագրող Կողմերին և ցանկացած պետության, որը Կոնվենցիային միանալու հրավեր է ստացել: